ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մայիսի 2025 թվականի N 602 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 2106-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» N 2106-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին և 6.2-րդ կետերով.

«6.1. Հայաստանի Հանրապետության կողմից հիմնադրված իրավաբանական անձինք, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 3-ի N 1581-Ն որոշումներով վերապահված պատվիրատվության հիման վրա իրականացնում են շինարարական աշխատանքներ, կարող են ներկայացնել քաղաքաշինության բնագավառում շինարարության

որակի տեխնիկական հսկողության գործունեության տեսակի 1-ին դասի լիցենզիա կամ լիցենզիային կից համապատասխան ներդիր ստանալու հայտ՝ չկիրառելով սույն կարգի 10-րդ կետը:

6.2. Սույն կարգի 6.1-ին կետով ներկայացված հայտը լիցենզավորող մարմնի կողմից ենթակա է բավարարման, եթե՝

1) հայտատուն ունի քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության տեսակի 2-րդ դասի լիցենզիա.

2) առկա է տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմնի համաձայնությունը.

3) բավարարում է շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության տեսակի լիցենզիայի կամ համապատասխան ներդիրի տրման համար հայտատուի կազմում ներգրավված ինժեներատեխնիկական անձնակազմին, լաբորատորիային, սարքավորումներին կարգով սահմանված պահանջներին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

15.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ